

# ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

## **Ա մակարդակ**

**1 Ո՞ր հիվանդության հարուցիչն է պատկանում պրոկարիոտներին.**

- 1) սուլիոմիելիտի
- 2) կարմրախտի
- 3) բրուցելյոզի
- 4) դարաղի

**2 Ի՞նչն է բնորոշ պենիցիլին.**

- 1) միցելլ ճյուղավորված է, առանց միջնապատի, բազմաթիվ կորիզներով
- 2) սնկամարմինը կազմված է մեկ կորիզ ունեցող ճյուղավորված, առանց միջնապատերի բջիջներից
- 3) մարմինը կազմված է անգույն թելերից՝ իիֆերից, որոնք որպես պաշարանյութ կուտակում են զյուկագոն
- 4) սպորները հասունանում են սնկամարմնից վեր բարձրացող վրձնաձև ճյուղավորված թելերի ծայրում

**3 Անձրևորդի օրգանիզմում արյունը շարժվում է.**

- 1) մեջքային անոթով՝ առջևից ետ, փորային անոթով՝ հետևից առաջ
- 2) մեջքային անոթով՝ առջևից ետ
- 3) մեջքային անոթով՝ հետևից առաջ
- 4) փորային անոթով՝ հետևից առաջ

**4 Զկան գլխուղեղի ո՞ր բաժնից են դուրս գալիս տեսողական նյարդերը.**

- 1) միջին ուղեղից
- 2) միջակա ուղեղից
- 3) առջևի ուղեղից
- 4) երկարավուն ուղեղից

**5 Թոշունների թևերի իջեցման հիմնական դերը պատկանում է.**

- 1) ենթանրակային մկաններին
- 2) ենթանրակային և կրծքի մկաններին
- 3) կրծքի մեծ մկաններին
- 4) միջկողային մկաններին

6

### Ի՞նչ է ընկերքը.

- 1) օրգան է, որում զարգանում է սաղմբ
- 2) սաղմի շնչառության օրգանն է
- 3) ձվատարի պատի տեղամասն է, որտեղ ամրանում է սաղմբ շրջապատող թաղանքը
- 4) արգանդի պատի տեղամաս, որտեղ ներածում են սաղմբ շրջապատող թաղանքի թավիկները

7

### Նշվածներից որո՞նք են գտնվում մարդու ողնուղեղի առջևի արմատիկներում.

- 1) զգայական և շարժողական նեյրոնների արտոնները
- 2) վեգետատիվ համակարգի նեյրոնների դենդրիտները
- 3) վեգետատիվ համակարգի և շարժողական նեյրոնների մարմինները
- 4) վեգետատիվ համակարգի և շարժողական նեյրոնների աքսոնները

8

### Ի՞նչ է մնացորդային օդը.

- 1) օդի այն քանակը, որը ներշնչման ժամանակ քափանցում է թոքեր և մասնակցում է զազափոխանակությանը
- 2) օդի այն առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո
- 3) ներշնչված օդի այն ծավալը, որը մնում է շնչառական ուղիներում և զազափոխանակությանը չի մասնակցում
- 4) ամենախորն արտաշնչումից հետո թոքերում պահպանված օդը

9

### Ո՞ր ընկալիչներն են առավել շատ մարդու մաշկում.

- 1) ցավի
- 2) հսկան
- 3) ջերմային
- 4) սառնության

10

### Քանի՞ լիտր արյուն է հոսում մարդու երիկամի զարկերակով մեկ օրվա ընթացքում.

- 1) 1500-1700
- 2) 200-300
- 3) 150-170
- 4) 750-850

11

### Մարդու օրգանիզմում ո՞ր սալիտակուցն է իրականացնում պաշտպանական գործառույթը.

- 1) դինեինը
- 2) հեմոգլոբինը
- 3) ինտերֆերոնը
- 4) ամիլազը

12

**Մարդու օրգանիզմում որտե՞ղ է քայլայվում կարբոհեմոգլոբինը.**

- 1) արյան շրջանառության մեծ շրջանի մազանոթներով հոսող արյան մեջ
- 2) խոշոր զարկերակներով հոսող արյան մեջ
- 3) արյան շրջանառության փոքր շրջանի երակներով հոսող արյան մեջ
- 4) արյան շրջանառության փոքր շրջանի մազանոթներով հոսող արյան մեջ

13

**Մարդու օրգանիզմում ո՞ր ուկորներն են հոդավորված.**

- 1) ստորին ծնոտը և այտոսկրերը
- 2) սրբոսկրը և կոնքոսկրերը
- 3) կրծոսկրը և կողոսկրերը
- 4) ազդրոսկրը և կոնքոսկրը

14

**Ո՞ր գործընթացն է համապատասխանում լյարդի պատճեշային ֆունկցիային.**

- 1) ֆիբրինոգեն և պրոբրոմբին սպիտակուցների սինթեզը
- 2) արյան մեջ գլյուկոզի քանակի կարգավորումը՝ գլյուկոզենի սինթեզը և քայլայումը
- 3) սպիտակուցների քայլայման արգասիքների վերափոխումը միզանյութի
- 4) լեղու արտադրությունը

15

**Ո՞ր վիտամինով հարուստ սնունդ է անիրաժեշտ ընդգրկել տեսողության խանգարումներ, քերանի լորձաբաղանքի ախտահարում ունեցող մարդու սննդակարգի մեջ.**

- 1)  $B_1$
- 2) C
- 3) A
- 4)  $B_2$

16

**Ո՞ր շարքում են թվարկված տարբեր կենդանի օրգանիզմների բջջապատի կազմության մեջ մտնող ածխաջրերը.**

- 1) օսլան, գլիկոզենը, քսիլոզը
- 2) թաղանթանյութը, գլյուկոզը, ֆրուկտոզը
- 3) խիտինը, նանանը, ցելյուլոզը
- 4) գլյուկոզը, ֆրուկտոզը, էրիթրոզը

17

**Ո՞ր օրգանիզմի բջջներում է ժառանգական տեղեկատվությունն ամփոփված ԴՆԹ-ի օղակաձև մոլեկուլում.**

- 1) սովորական ամեռքայի
- 2) պալարաբակտերիայի
- 3) հոդաբափիլ-ինֆուզորիայի
- 4) կանաչ էվգլենայի

18

Բջջում որտե՞ղ է կատարվում լիպիդների ճեղքավորումը մինչև զիցերինի և ճարպաբբուների.

- 1) Գոլջիի ապարատում
- 2) Միտոքոնդրիումներում
- 3) Ռիբոսոմներում
- 4) Լիզոսոմներում

19

Հետևյալ վիրուսներից ո՞րն է դասվում ֆազերի շարքին.

- 1) հերպեսի վիրուսը
- 2) գրիպի վիրուսը
- 3) խոլերայի հարուցչի վիրուսը
- 4) ԶԻՍՀ-ի վիրուսը

20

Որտե՞ղ են սինթեզվում ճարպերը ճեղքավորող ֆերմենտները.

- 1) Լիզոսոմներում
- 2) հատիկավոր էնդոպլազմային ցանցի վրա
- 3) ողորկ էնդոպլազմային ցանցի վրա
- 4) Գոլջիի ապարատում

21

Մարդու հետևյալ հասուն բջիջներից ո՞րը ունակ չէ սինթեզելու սպիտակուց.

- 1) Անյրոնը
- 2) Լիմֆոցիտը
- 3) Էրիթրոցիտը
- 4) Մարդի բջիջը

22

ԴՆԹ-ի մոլեկուլում ո՞ր եռյակին է համապատասխանում ի-ՌՆԹ-ի այն եռյակը, որին կոմպլեմենտար է փ-ՌՆԹ-ի ՌԻՌ-Ց գաղտնագրող եռյակը.

- 1) ԱԱԹ-
- 2) Թ-Թ-Գ-
- 3) ԱԱԳ-
- 4) Թ-Թ-Ց

23

Քանի՞ փոխարրող ՌՆԹ կմասնակցի 300 նուկլեոտիդներից կազմված գենում կոդավորված սպիտակուցի սինթեզին.

- 1) 300
- 2) 100
- 3) 50
- 4) 900

24

Ինչո՞ւ է գենետիկական կողը համարվում միանշանակ և ունիվերսալ քանի ոք՝

- 1) յուրաքանչյուր նույլեռտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 2) գեների միջև կան «ընդհատումներ»
- 3) միևնույն ամինաթրուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով
- 4) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթրուն

25

Հետևյալ կառուցվածքներից ո՞րտեղ չի պարունակվում ՌՆԹ.

- 1) ռիբոսումներում
- 2) ցենտրիուլներում
- 3) կորիզակներում
- 4) Գոլջիի ապարատի թաղանթների վրա

26

Ֆուտոսինթեզի լուսային փուլում ինչպե՞ս է առաջանում ատոմական ջրածինը.

- 1) անջատվում է ֆոսֆորական թթվից
- 2) ջրի մոլեկուլների ճեղքավորումից
- 3) գլյուկոզի ճեղքավորումից
- 4) անջատվում է ԱԵՖ-ից

27

Ո՞ր դեպքում է առաջանում ասիմետրիկ տրանսլոկացիա.

- 1) երբ երկու քրոմոսումների՝ ցենտրոմեր պարունակող հատվածները անջատվում են իրարից
- 2) երբ մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը միանում է մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չպարունակող հատվածի հետ
- 3) երբ հոմոլոգ քրոմոսումները ցենտրոմերներով հապվում են իրար
- 4) երբ երկու քրոմոսումների՝ ցենտրոմեր պարունակող հատվածները միանում են իրար

28

Ինչպիսի՞ն են եղել ծնողական գենոտիպերը, եթե երկիիբրիդ խաչասերումից հետո սերնդում, երկու ալելով էլ ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում, ստացվել է 1:1:1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի.

- 1) AaBb և AaBb
- 2) AABB և AABB
- 3) AAbb և aabb
- 4) AABB և AaBb

29

Ի՞նչ է գեների կոմպլեմենտար ազդեցությունը.

- 1) մեկ ալելային զույգի փոխներգործությունը
- 2) շղթայակցված գեների փոխներգործությունը
- 3) տարրեր ալելային զույգերի փոխներգործությունը
- 4) գերդոմինանտուրյունը պայմանավորող զույգերի փոխներգործությունը

**30 Ի՞նչ է տեղի ունենում աճման գոտում՝ սեռական բջիջների ձևավորման ժամանակ.**

- 1) բջիջները կիսվում են մեյոզով
- 2) բջիջները սկզբում կիսվում են միտոզով, այնուհետև՝ մեյոզով
- 3) բջիջները չեն կիսվում, տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում
- 4) բջիջները կիսվում են միտոզով

**31 Ինչո՞վ է պայմանավորված ցիտոպլազմային ժառանգականությունը.**

- 1) կորիզի քրոմոսոմների գեներով
- 2) ցիտոպլազմայում գտնվող ոիբրոսոմների ՈՆԹ-ի մոլեկուլներով
- 3) ցիտոպլազմա ներթափանցած վիրուսների գեներով
- 4) միտոքոնիումների կամ պլաստիդների գեներով

**32 Ո՞ր փոխարարերությունը կոմենսալիզմի օրինակ չէ.**

- 1) կարապուսի և հոլոտուրիայի
- 2) դելֆինների և լոցման ձկների
- 3) էպիֆիտ բույսերի և որոշ ծառաբույսերի
- 4) խեցքետնի և ակտինիայի

**33 Ո՞րը օրգանիզմների միջավայր գոյացնող ֆունկցիայի դրսևորում չէ.**

- 1) մասնակցությունը հողառաջացմանը
- 2) մքննոլորտի գազային կազմի ձևավորումը
- 3) երկարի և մանգանի հանքերի առաջացումը
- 4) հանաշխարհային օվկիանոսի աղային կազմի փոփոխությունը

**34 Նշված օրգանիզմներից որո՞նք ավտոտրոֆ չեն.**

- 1) նիտրիֆիկացնող բակտերիաները
- 2) երկարաբակտերիաները
- 3) աղիքային ցուպիկները
- 4) ծծմբաբակտերիաները

(35-36) Ծովային խեցգետնակերպերի մի տեսակն ունի լուսարձակելու ընդունակություն, որը պայմանավորված է որոշակի ֆերմենտով: Ֆերմենտի սինթեզը պայմանավորում է Ա գենը: Ա-ի դեպքում ֆերմենտ չի սինթեզվում: Մեկ որիշ՝ Բ գենը Ա-ի վրա ունի ճնշող ազդեցություն: Բ գենի ռեցեսիվ ալելը գուրկ է ճնշող ազդեցությունից: Խաչասերել են հոմոզիգոտ խեցգետնակերպեր, որոնք չունեն լուսարձակելու ընդունակություն: Առաջին սերնդի բոլոր կենդանիները նույնական չունեն լուսարձակելու ընդունակություն: Երկրորդ սերնդում ստացվեցին 16 առանձնյակներ, որոնցից 3-ը լուսարձակում էին, մյուսները՝ ոչ:

35

Ինչպիսի՞ն են եղել առաջին սերնդի ծննդների գենոտիպերը:

- 1) AaBb x AaBb
- 2) AABb x AaBB
- 3) aabb x AABB
- 4) AaBB x Aabb

36

Որքա՞ն է երկրորդ սերնդում հոմոզիգոտ լուսարձակող առանձնյակի ձևավորման հավանականությունը:

- 1) 3/16
- 2) 1/16
- 3) 1/8
- 4) 1/4

(37-38) Խաչասերել են AABbCcDdEe x AaBbCcDDEe գենոտիպերով առանձնյակներին:

Ալելային գենների առաջին երեք գույզերում առկա է ոչ լրիվ դոմինանտություն, իսկ վերջին երկուսում՝ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գենները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր գույզերում:

37

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 108
- 2) 81
- 3) 54
- 4) 36

38

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 81
- 2) 36
- 3) 54
- 4) 108

(39-40) Ի-ՌՆԹ-ի մոլեկուլում աղենինային և ուրացիլային նուկլեոտիդները միասին կազմում են 70%: ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածի երկարությունը, որից ստացվել է տվյալ ի-ՌՆԹ-ն՝  $2,38 \cdot 10^{-6}$  մետր է, իսկ մեկ նուկլեոտիդի երկարությունը՝  $0,34$  նանոմետր:

39

Գտնել թիմինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 2100
- 2) 4200
- 3) 9800
- 4) 4900

40

Գտնել ցիտոզինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 2100
- 2) 4200
- 3) 9800
- 4) 4900

41

Ինչպիսի՞ն է մարդու տեսողական վերլուծիչում գործընթացների հաջորդականությունը սենյակի թույլ լուսավորվածության պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. տեսողական ճանաչողության գոտու բջիջների դրդում
2. ակնաբյուրեղի կորության փոփոխում
3. բրի լայնացում
4. լույսի ճառագայթների անցում եղանականթով
5. թարթիչավոր մարմնի մկանների կծկում
6. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդների կեղևի ծոծրակային բիլք
7. ցույցիկների և սրվակների գրգռում
8. տեսողական զգայության առաջացում

42

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը էներգիական փոխանակության ժամանակ.

1. պրոտոնների և էլեկտրոնների փոխադրում փոխադրիչ մոլեկուլների մասնակցությամբ
2. ֆերմենտների ազդեցությամբ բարդ օրգանական նյութերի ճեղքում
3. միտոքոնիրիումում ԱԵՖ-ի առաջացում
4. 2 մոլեկուլ ացետիլ-կոֆերմենտ A-ի առաջացում
5. պարզ շաքարի ճեղքում
6. պիրոխաղողաթթվի առաջացում

43

Նիտրիֆիկացնող բակտերիաների կենսագործունեության արդյունքում ի՞նչ նյութեր են առաջանում: Նշել բոլոր ճիշտ պատասխանները.

1. մոլեկուլային ազոտ
2. նիտրիտներ
3. նիտրատներ
4. ամոնիակ
5. ազոտի օքսիդ
6. ամոնիումի աղեր

44

Ողնաշարավոր կենդանիների զարգացման սաղմնային շրջանում ո՞ր օրգանը և օրգան-համակարգերը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից են (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, օրգան-համակարգ

Սաղմնային թերթիկ

- A. հենաշարժիչ համակարգ  
B. միզասեռական համակարգ  
C. ենթաստամոքսային գեղձ և լյարդ  
D. սիրտ-անոթային համակարգ  
E. նյարդային համակարգ և տեսողական զգայարան  
F. մարտղական խողովակ  
G. լսողության օրգան

1. մեզոդերմ
2. էկտոդերմ
3. էնտոդերմ

45

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. սիմպաթիկ նյարդաթելերով ողնուղեղի կողմնային եղջյուրներից հաղորդվող ազդակներն ուժեղացնում են ջրի հետադարձ ներծծումը երիկամներում և նվազեցնում մեզի քանակը
2. ողնուղեղի սրբանային բաժնի հատվածների կողմնային եղջյուրներում առաջացող նյարդային ազդակները հրահրում են միզապարկի մկանների կծկում
3. ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներից հեռացող նյարդաթելերն ավելի բարակ են, քան կողմնային եղջյուրներից հեռացողները
4. պարասիմպաթիկ նյարդային համակարգի նախահանգուցային նյարդաթելերն ավելի երկար են, քան հետհանգուցայինները
5. ողնուղեղի կրծքային բաժնի հատվածների կողմնային եղջյուրներից հաղորդվող ազդակները խթանում են ստամոքսի և սրտի աշխատանքը
6. պարասիմպաթիկ նյարդաթելերով գլխուղեղից հաղորդվող նյարդային ազդակները նեղացնում են բիբը

## Բ մակարդակ

46

Նշել մարդու օրգանիզմում դեպի գլխուղեղի բջիջներ ճարպերի տեղափոխման հաջորդական ուղին՝ սկսած բարակ աղիներում ճարպերի քայլայման գործընթացից.

1. ավշային մազանոթներ
2. ձախ նախասիրտ
3. թռային երակ
4. թավիկների էպիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
5. առրտա
6. գլցերինի և ճարպաթթուների ներծծում
7. գլխուղեղի զարկերակներ
8. ստորին սիներակներ
9. նեյրոններ

47

Զանգը հնչելիս նյարդային գրգիռն ի՞նչ հաջորդականությամբ է անցնում ազդակի հաղորդման ուղու նշված տեղամասերը թքազատության պայմանական ռեֆլեքսի դրսության ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. զգայական նեյրոն
2. մեծ կիսագնդերի կեղևի սննդառական կենտրոն
3. շարժողական նեյրոն
4. երկարավուն ուղեղի թքազատության կենտրոն
5. մեծ կիսագնդերի կեղևի լսողական զոտի
6. թքագեղձ
7. ձայնի ընկալիչ

48

Ինչպիսի՞ն է համի զգացողության ձևավորման գործընթացների հաջորդականությունը մարդու մոտ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սննդի բաղադրիչների լուծում թքում
2. համի զգայության ձևավորում
3. կենտրոնաձիգ նյարդերով նյարդային ազդակների հաղորդում երկարավուն ուղեղ
4. թերանի խոռոչի մեխանընկալիչների գրգռում չոր սնունդի հետ շփվելիս
5. քիմընկալիչների դրորում
6. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղևի կենտրոնական ակոսի ստորին մաս
7. թքազատության ուժեղացում

49

Ինչպիսի՞ն է անարողիզմի ընթացքում տեղի ունեցող պրոցեսների հաջորդականությունը.

1. ի-Ո-ՆԹ-ի միացում ոիրոսումների հետ և ոիրոսումի գործառական կենտրոնի առաջացում
2. Ո-ՆԹ-ների տարրեր մոլեկուլների՝ ի-Ո-ՆԹ-ի, փ-Ո-ՆԹ-ի, ո-Ո-ՆԹ-ի տեղափոխում կորիզից դեպի ցիտոպլազմա
3. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
4. Ո-ՆԹ-ների տարրեր մոլեկուլների՝ ի-Ո-ՆԹ-ի, փ-Ո-ՆԹ-ի, ո-Ո-ՆԹ-ի սինթեզ
5. պոլիպեպտիդային շղթայի տարածական կառուցվածքի առաջացում
6. ամինաթթուների միջև պեպտիդային կապի առաջացում
7. համապատասխան ամինաթթուների միացում փ-Ո-ՆԹ-ին

50

Մարդու օրգանիզմի գործառույթը և բնութագիրը (նշված է ձախ սյունակում) նեֆրոնի ո՞ր բաղադրիչին (նշված է աջ սյունակում) են համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանությունները.

Գործառույթ և բնութագիր

Նեֆրոնի բաղադրիչ

- A. առաջնային մեզի առաջացում  
B. հետաղարձ ներծծում արյան մեջ  
C. գտնվում է երիկամի և կեղևային, և՝ միջուկային շերտերում  
D. գտնվում է երիկամի կեղևային շերտում,  
կազմված է միաշերտ էպիթելի երկու շերտերից  
E. երկրորդային մեզի առաջացման ավարտ  
F. արյան պլազմայի ֆիլտրում

1. գալարուն և ծնկաձև  
խողովակներ  
2. նեֆրոնի պատիճ  
3. մազանոթների կծիկ  
4. հավաքող խողովակ

51

Ի՞նչ համապատասխանություն կա տարրեր դասերի կենդանիների ներկայացուցիչների (նշված է ձախ սյունակում) և դրանց հետսաղմնային զարգացման ձևերի (նշված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կենդանիների դասերը

Հետսաղմնային զարգացման ձևերը

- A. տղրուկ  
B. թիրեն  
C. մորեխ  
D. մայիսյան բղեղ  
E. սարդ  
F. ծղրիդ  
G. մողես

1. լրիվ կերպարանափոխությամբ զարգացում  
2. ուղղակի զարգացում  
3. թերի կերպարանափոխությամբ զարգացում

52

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) էռևարիուտ քջի կենսական ցիկլի ո՞ր փուլում է (նշված է աջ սյունակում) իրականանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործընթաց

Կենսական ցիկլի փուլ

- A. ցիտոկինեզ
- B. ցենտրիուլների կրկնապատկում
- C. մատրիցային սինթեզ ԴՆԹ-ի երկու շղթաների վրա
- D. ԴՆԹ-ից տեղեկատվության արտագրման դադարում
- E. քջի աճ
- F. բաժանման իլիկի թելիկները կազմող սպիտակուցների սինթեզ
- G. քրոմատիդների կրկնապատկում

- 1. G<sub>1</sub>
- 2. այրոֆազ
- 3. G<sub>2</sub>
- 4. թելոֆազ
- 5. S

53

Ի՞նչ համապատասխանություն կա Ժառանգական փոփոխականության առաջացման մեխանիզմի (նշված է ձախ սյունակում) և նրա տեսակների (նշված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Մեխանիզմ

Փոփոխականության տեսակ

- A. ԴՆԹ-ի հատվածի կրկնապատկում
- B. քրոմոսոմների թվի փոփոխություն
- C. ԴՆԹ-ի հատվածի տեղափոխում այլ ԴՆԹ-ի մոլեկուլ
- D. ԴՆԹ-ի մոլեկուլից մեկ-երկու նուկլեոտիդների հեռացում
- E. ծնողների գեների միավորում
- F. տրամախաչում

- 1. գենային մուտացիա
- 2. համակցական փոփոխականություն
- 3. քրոմոսոմային մուտացիա
- 4. գենոմային մուտացիա

54

**Նշել երկկենցաղներին բնորոշ բոլոր ճիշտ պնդումները.**

1. Երկկենցաղների բեղմնավորումն արտաքին է, սակայն հնարավոր է նաև ինքնարելմնավորում
2. Կոյանոցի մեջ բացվում են ուղիղ աղին, միզածորանները և սեռական գեղձերի արտատար ծորանները
3. ողնաշարում տարրերում են 4 բաժիններ
4. հասուն առանձնյակներն ունեն արյան շրջանառության երկու շրջան՝ փոքր և մեծ
5. ձկների գլխուղեղի համեմատ ավելի լավ են զարգացած երկկենցաղների ծայրային ուղեղը և ուղեղիկը
6. ունեն 5 բաժնից կազմված երկու զույգ վերջույթներ
7. Ենթաստամոքսային գեղձի և լյարդի ծորանները բացվում են գեղձային ստամոքսի մեջ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ատավիզմները որոշ առանձնյակների՝ նախնիների հատկանիշներին վերադառնալու դեպքեր են
2. նման կառուցվածք և ընդհանուր ծագում ունեցող օրգանները, անկախ նրանց կատարած ֆունկցիաներից, կոչվում են անալոգ
3. թիթեղի և չղղիկի թևերը հոմոլոգ օրգաններ են
4. մարդու ականջային մկանները, երրորդ կողմը ոուղիմնենս օրգաններ են
5. արտաքինից միանման և միևնույն ֆունկցիա կատարող, բայց տարբեր ծագում ունեցող օրգանները կոչվում են հոմոլոգ օրգաններ
6. ոուղիմնենսները ձևավորվում են սաղմնային զարգացման ընթացքում, հետագայում դադարում են զարգանալ և հասուն օրգանիզմներում չեն գործում
7. ոլորի բեղիկները, կակտուսի փշերը հոմոլոգ օրգաններ են

## Որո՞նք են բոլոր սխալ պնդումները.

1. կոնյուգացիայի ժամանակ հոմոլոգ քրոմոսոմները ամրող երկարությամբ հպվում են իրար և երբեմն փոխանակվում են գեներով
2. մեյոզի կենսաքանական նշանակությունը կայանում է նրանում, որ դուստրը բջիջները ստանում են նույն քրոմոսոմային հավաքակազմը, ինչ ունի մայրական բջիջը
3. միտոզի մետաֆազում քրոմոսոմները դասավորվում են բջջի հասարակածային հարթության վրա՝ ամրող երկարությամբ իրար հպված
4. գեների շղթայակցման խումբը համընկնում է զամենաներում քրոմոսոմների թվին
5. արտակորիզային գեների համար դիպլոիդ հավաքակազմ հասկացությունը բացակայում է
6. միտոքոնդրիումներում և քլորոպլաստներում նույնական տեղի է ունենում մեյոզ նախքան կիսվելը
7. հերմաֆրոդիտիզմը կուսածնությամբ բազմացման եղանակ է

## Նշել սխալ պնդումները.

1. վարսանդի սերմնարանում դիպլոիդ հավաքակազմով բջջից մեյոզի արդյունքում առաջանում են հապլոիդ հավաքակազմով չորս բջիջներ, որոնցից երեքն այնուհետև ոչնչանում են, իսկ մեկը սկիզբ է տալիս ութ հապլոիդ կորիզներ պարունակող սաղմնապարկի
2. սեռական բազմացման կարևոր հետևանքներից մեկը համակցական փոփոխականության առաջացումն է
3. գեների շղթայակցման խումբը հաստատում չէ և սովորաբար կախված է արտաքին միջավայրի պայմաններից
4. X-ը կոչվում է իգական, Y-ը՝ արական քրոմոսոմ՝ իգական հոմոզամետության, և Y-ը կոչվում է իգական, X-ը՝ արական քրոմոսոմ՝ իգական հետերոզամետության դեպքում
5. անհատական զարգացման սաղմնային շրջանը բաժանվում է երեք հիմնական փուլերի՝ բլաստոլի առաջացում, զաստրոլացում և առաջնային օրգանոգենեզ
6. անսեռ բազմացման արդյունքում, սերմնում ստացվում են գենոտիպորեն և ֆենոտիպորեն իրարից խիստ տարբերվող առանձնյակներ

58

**Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.**

1. Ֆիբրինը պլազմայում լուծված սպիտակուց է
2. արյան ճնշումը կախված է անորների պատերի առաձգականությունից և սրտի փորոքների կծկման ուժից
3. մնացորդային օդի ծավալը մոտ 3500 սմ<sup>3</sup> է
4. սրտի ինքնավարությունը պայմանավորող բջիջների խումբը գտնվում է աջ նախարտի պատում
5. գանգում կան միայն երկու շարժուն միացումներ
6. միջածիգ գոլավոր մկանները կազմված են բազմակորիգ բջիջներից
7. առավել կայուն միացում հեմոգլոբինն առաջացնում է ածխաթթու գազի հետ

59

**Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. Էներգիական փոխանակության թրվածնային փուլում, երբ պրոտոնային պոտենցիալը միտոքոնորիումների թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի պրոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ թաղանթի արտաքին մասից դեպի ներքին մակերևույթ
2. պլազմային թաղանթի կազմության մեջ մտնող լիպիդների ճարպաթթվային կառուցամասերը ներկայացված են «գլխիկներով», իսկ սպիրոտային կառուցամասերը՝ «պոչիկներով»
3. ֆոսֆոլիպիդների ոչ ճարպաթթվային մասերում կան լիցքեր կրող տարրեր կողմնային խմբեր, ինչի շնորհիվ այս լիպիդները բջջարադանթներում կատարում են կառուցողական ֆունկցիա
4. կաթնասունների հասուն էրիթրոցիտներում կորիզ չկա, այդ պատճառով նրանք պրոկարիոտ բջիջներ են համարվում
5. Էնդոպլազմային ցանցի թաղանթների վրա սինթեզված սպիտակուցների մոլեկուլների փոխարկերպումը և բարդ սպիտակուցների առաջացումը տեղի է ունենում Գոլջիի ապարատում
6. սարկոպլազմային ցանցը հատիկավոր էնդոպլազմային ցանցի ձևափոխությունն է մկանային բջիջներում
7. ֆոտոսինթեզի մթնային փուլի համար անհրաժեշտ ածխաթթու գազն առաջանում է լուսային փուլում՝ ֆոտոլիզի հետևանքով
8. բույսերի բջջապատը կազմված է արտաքին շերտից և դրա տակ գտնվող պլազմալեմից

(60-61) Գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 190 մոլ  $H_2O$ , և քրվածնային փուլի էներգիայի կորուստը կազմել է 6080 կՋոուլ: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

60 Քանի՞ մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում:

61 Քանի՞ կՋոուլ է կազմում էներգիայի կորուստը անթթվածին փուլում:

(62-63) Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, երբ ծնողներից մեկն ունենում է գանգուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ: Ալիքաձև մազերով և արյան I խմբով տղամարդն ամուսնացել է ուղիղ մազերով և արյան IV խմբով կնոջ հետ:

62 Որոշել գանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

63 Որոշել ըստ տվյալ հատկանիշների երկինտերոզիզոտ երեխայի ծնվելու հավանականությունը (%-ով):

(64-66) Մարդու սիրտը հարաբերական հաճախատի վիճակում շրջանառության է մղել 9450 լ արյուն: Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օրի ծավալը մեծացել է 1,6 անգամ, օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճել է 25%-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝ 1,4 անգամ: Ընդունել, որ հարաբերական հաճախատի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, գազափոխանակության է մասնակցել ամրող ներշնչված օդը, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ. և մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 70 մլ արյուն:

64

Քանի՞ ժամ է տևել ֆիզիկական աշխատանքը:

65

Որոշել՝ ֆիզիկական աշխատանք կատարելու ընթացքում քանի՞ լիտր արյուն է մղվել շրջանառության:

66

Որոշել՝ 1 օրվա ընթացքում քանի՞ լիտր թթվածին է օգտագործվել օրգանիզմում, եթե մարդը մեկ օրվա ընթացքում քնած է եղել 7 ժամ:

(67-68) Օրվա ընթացքում մարդու մաշկի մակերևույթից գոլորշիացել է 2 կգ քրտինք: Հայտնի է, որ մաշկի մակերևույթից ջերմաճառազայրման միջոցով հեռացվում է ավելցուկային ջերմային էներգիայի 60%-ը, գոլորշիացման միջոցով՝ 20%-ը:

67

Որոշել օրվա ընթացքում մարդու մաշկի մակերևույթից ճառագայթված ջերմային էներգիայի քանակը, եթե 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ ջերմային էներգիա (կԶ-ով):

68

Ընդամենը որքա՞ն քրտինք կգոլորշիացվեր օրվա ընթացքում մեկ քրտնազեղձով, եթե ճառագայթված էներգիան նույնապես ծախսվեր քրտինքի գոլորշիացման համար (մգ-ով):

69

16-ժամյա լուսային օրվա պայմաններում  $70 \text{ m}^2$  տերևային մակերևույթ ունեցող ծառի կողմից 30 օրուն քանի՞ լիտր թթվածին է արտադրվել, եթե 1 մոլ գազը պարունակում է 22.4 լիտր ծավալ:

70

Օվոգենեզի վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Մյալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. առաջին կարգի օվոցիտը միտոզով կիսվելով՝ վերածվում է երկրորդ կարգի օվոցիտի
2. մեյոզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հավլոխի բջիջներ
3. երկրորդ կարգի օվոցիտի երկրորդ բաժանումը մեյոզի ընթացքում կանգ է առնում պրոֆազում և շարունակվում է մինչև վերջ միայն ձվագատման պահին
4. առաջին կարգի օվոցիտներն ունեն քրոմոսոմների  $4n4c$  հավաքակազմ
5. ձվարանների բազմացման գոտու 2n2c հավաքակազմով բջիջները կոչվում են օվոզոնիումներ
6. 1n2c հավաքակազմ ունեցող խոշոր բջիջը կոչվում է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքր բջիջը՝ ուղղորդող մարմին